



45. ԾԱՌԻ ԱՂԶԿԱ ՀԵՔԻԱԹԸ

Մե թաքավոր ուներ մե շատ լավ տղա: Էս տղեն դառցեր էր եռեսուն տարեկան, չէր պսակվում: Ոչ հինքն էր աղջիկ ջոկում, ոչ էլ հոր ու մոր ջոկած աղջիկներին էր հավանում:

— Ես հողածինի աղջիկ չեմ ուզում, — ասում էր, — իմ կնիկը պիտի լինի կամ ծառի աղջիկ կամ ջրի աղջիկ կամ երկնքից իջած, կամ թռչունի ճուտ:

Հերն ու մերը մնացեր ին չիվար: Էտ տեսակ աղջիկ ո՞նց ճարեն: Օրերից մե օր թաքավորը գնաց գետի ափը ման գալու: Տեսավ մե ծերունի ա նստած, թուղթ ա գրում, գիրք ա կառնում, աղոթք ա անում, ինքը իրան դնդնալով երթում ա:

Թաքավորը մոտցավ էս ծեր մարթին, ասավ. — Պապե՛, ես էս երգրի թաքավորն եմ: Մե տղա ունեմ, եռեսուն տարեկան ա, չի պսակվում, ի՞նչ անեմ, որ պսակվի, դու իմաստուն մարթ ես, հնա-րը կիմանաս:

— Ի՞նչ ա ասում, որ չի պսակվում, թաքավոր՝:

— Ասում ա, որ իրա կնիկը կամ ծառից ծնված պիտի ըլնի կամ ջրից ծնված կամ երգնքից ընկած: Էտ տեսակ աղջիկ էլ չըկա, մա-ցեր ենք չիվար:

Ծերունին ասավ, որ տղեն լավ ա մտածում:

— Քո տղեն խելոք տղա ա, թաքավոր՝, ուզում ա, որ կնիկը մա-քուր ըլնի: Ես հնար կանեմ, հեշտ ա:

— Մե հնա՛ր արա, քո քաշով ոսկի կըտամ, — ասավ թաքավորը:

Ծերունին մե թուղթ գրեց, մե աղոթք արավ, ասավ. — Առ էս թուղթը տա՛ր, գցի՛ էն չիմշատ ծառի վրեն, որ ճյուղին կպավ, էն ճյուղը կդրա՛:

Ճարավ քցեց ծառի վրեն: Թուղթը թռավ կպավ ամենաբանցր ճյուղին:

— Դե էտ ճյուղը կդրա՛, թաքավոր՝:

— Ես ո՞նց էդ ճյուղը կդրեմ, ա՛յ պապե:

— Ոնց կուզես, կդրա՛, էտ ա քո հարսը:

Թաքավորը գնաց, քառասուն մետրանոց մե նարդվան շինել տվեց, բերեցին դրեցին ծառի մոտ, գնացին: Որ մարթիք գնացին, ինքը մե սղոց վերցուց, բանցրացավ նարդվանի վրեն, հասավ էտ ճյուղին: Սկսեց կղբել:

Ճյուղն ասում էր.—Թաքավո՛ր հայրիկ, սղոցը կամա՛ց քաչա, մատներս ցավացնում ես, աչկերիս առաչը մթնում ա:

Թաքավորը շատ կամաց կղբեց ճյուղը, ծառից իջավ:

—Հիմի ի՞նչ անեմ, պապե՛, ճյուղը կղբեցի:

—Տար մե քիչ էն յանը, դի՛ր ջրի մեջը, կըղատնա աղջիկ:

Թաքավորը տարավ, մե խաղաղ տեղ դրեց ջրի մեջը, ետ էկավ: Մեկ էլ ետ դարցավ, հիշկաց տեսավ մե սիրուն աղջիկ գլոխը ջրից հանեց:

Ասավ.—Թաքավո՛ր հայրիկ, ախր ես չոր չունեմ:

Թաքավորն ասավ.—Հա՛րս ջան, դու լողացի՛, ես գնամ, ոսկեկար չոր հղրկեմ գա, կըհաքնես, ֆայտոն կըբերենք, կըտանենք:

Աղջիկը ջրի մեջ լողանում էր:

էտ աղջկան մոտեցավ մե բոչի սև աղջիկ ասավ.—Ա՛յ սիրուն աղջիկ, ո՞ւմ աղջիկն ես, մեր քաղաքում քո նման աղջիկ չեմ տեսե:

Ծառի աղջիկն ասավ, որ հինքը ծառի աղջիկ ա, չուտով Թաքավորը չոր կուղարկա, կըհաքնի կըգնա, դառնա Թաքավորի հարսը:

Բոչի աղջիկը որ էս լսաց, չորերն հանեց, Թռավ ջուրը, սկսեց էս աղջկան խեղդել: Աղջիկը տեսավ, որ խեղդվում ա, դարցավ մե նախշուն ձուկ, լողալով գնաց:

Ոսկեկար չորերը բերին, բոչի աղջիկը հաքավ: Հաքցրող աղջիկները մնացեր ին գարմացած, թե Թաքավորը էս սև սատանին ո՞նց ա հավանել, Թաքավորի տղեն էս աղջկան կառնի՞:

Ի՞նչ անեն, չորերը հաքցրին դրին ֆայտոնը, տարան: Ղառավաչներից մեկը գետի ափին տեսեր էր բոչի աղջկա չորերը, փաթըթեր էր, դրե թևի տակը, բերե:

Թաքավորը տեսավ, հինքն էլ գարմացավ.—Դու ծառի աղջիկը չես, իմ տեսածը չես:

—Ես ծառի աղջիկն եմ, դու քո ձեռով ճյուղը կղբիր, դրիր ջուրը:

—Իմ տեսած աղջիկը խորոտ էր:

—Շորերն ուչացրիք, արևը սևացրեց:

—Քո ձենը իմ տեսած աղջկա ձենին նման չի, դու ոնց որ բոչի աղջիկ ըլնես:

—Շորերն ուչացրիք, շատ մնացի ջրի մեջ, ձենս փոխվավ, մե քիչ մրսեր եմ:

Կանչին Թաքավորի տղին, ասին.—Աչկդ լուս, քեզի ծառի աղջիկ են բերե:

էկավ, որ տեսավ, թողեց տանից գնաց, իրանց բաղում էր արբում, հնձանում քնում:

Թաքավորն ինչքան տղին համոզեց, որ գա իրա կնգա մոտը, հնար չեկավ, չէկավ: Թաքավորը գնաց տեսավ՝ էլի բիձեն նստած ա: Պատմեց, ինչ որ իմանում էր:

Բիձեն ասավ.—Թաքավոր, գործը իրա չարով կըգնա, մի՛ վռա-
զի:

Թաքավորն էկավ տունը: Առաջվանից ավելի տխուր ա: Թա-
քուհին էլ նիյաթը կախ ա:

—Ա՛յ թաքավոր, էս ի՞նչ օյին բերիր մեր գլխին, տղեն տանից
գնաց:

Անցավ մե ժամանակ, տղեն տուն չի գալիս, բոչի աղջիկն էլ
թաքավորից պահանջում ա, որ իրա մարթին տուն բերա: Թաքա-
վորն էլի գնաց բիձի մոտ խորուրթ հարցնելու:

Բիձեն թաքավորին ասավ.—Մեկ էլ, որ հարսդ կասա, թե մար-
թիս տո՛ւն բեր, կասես. «Քեզի ծառից սղոցով եմ կղրել, հիմի էլ կը-
տանեմ կըղնեմ ծառին, ուրաքով գլխիդ կըզարկեմ, կպի՛ ծառից»:

Ուրաքի անունը որ լսաց, էլ ձեն չի անա: Թաքավորը գնաց
տուն:

Հարսը մոտցավ.—Դու էլ չըլնես, քո թաքավորութունն էլ չըլ-
նի, որ չես կանում, մե տղի տուն բերես: Էտ տեսակ տղի գլուխը
կղրել ա պետք, որ չէթա հնձանում պարկի:

—Մի՛ նեղացի, հա՛րս ջան: Ես քեզի ծառից սղոցով կղրել եմ,
հիմի կըտանեմ, քեզի դնեմ կղրած տեղը, ուրաքով կըտամ գլխիդ,
կպի՛ քո մորից: Վե՛ր, էթանք:

Թաքավորը որ ուրաքը վերցուց, բոչի աղջիկը մտավ իրա օթա-
ղը, դուռը փակեց:

Էտ ժամանակ թոռչիները ջրից մե չըտեսնված ձուկ բռնին: Որո-
չեցին քցեն վեղորոյի ջրի մեջը, տանեն թաքավորին, թաքավորը մե
քանի ոսկի կըտա, կըտանեն կաբեն:

Որ տարան, թաքավորը տեսավ, ասավ.—էս ձուկը տարե՛ք,
քցե՛ք հավուզը, թող արբի, ոչ մե թաքավոր էս տեսակ ձուկ չունի:

Թաքավորի տղեն որ տեսավ, սիրահարվավ էտ ձկան վրեն, էլ
հավուզից չի հեռանում: Զուկը թռնում ա թաքավորի տղի գիրկը:
էս տղեն պաշում ա, էլի քցում ա ջուրը: Սաղ օրը ձկան հետ խա-
ղում ա:

Բոչի աղջիկը տեսավ, ճանչցավ, թաքավորին ասավ.—Որ էտ
ձուկը էփեն, ես ուտեմ, կըխորոտնամ:

Թաքավորն ասավ, որ բերեն, էփեն:

Տղեն չըտվեց, ասավ.—Հայրի՛կ, որ էս ձուկը էփե՛ք, էտ բոչի

աղջիկն ուտա, ես ընձի կրպանեմ: Էս ձուկը իմ բաժինն ա: Քո թաքավորությունից բաժին չեմ ուզում:

Բերին էտ բոլին մե ձուկ, էտ տեսակ նախշին, բոշի աղջկան նշանց տվին, ասին.—Ճանչնո՞ւմ ես, էն ձուկն ա:

Բոշի աղջիկը վեր թռավ, ձկան փորը ճղեց, ասավ.—Շո՛ւտ արեք, էփե՛ք, էտի ա իմ դուշմանը:

Էփեցին, կերավ, էլի մնաց դարոշը:

Թաքավորի տղեն ձուկը տարավ քցեց գետը: Ամեն օր էթում էր նստում գետի ափը, ձուկը գալիս էր մոտը, խաղում, թռնում տղի գիրկը, տղեն պաչում էր, էլի քցում ջուրը: Մե օր մե պառավ տեսավ, որ թաքավորի տղեն ամեն օր նստում ա գետի ափը, ձուկը թռնում ա գիրկը, թաքավորի տղեն պաչում ա, էլի քցում ջուրը: «Էստեղ մե բան կա»,—մտածեց պառավը, մոտցավ թաքավորի տղին:

—Թաքավորի՛ տղա, սիրահարվեր ես էտ ձկան վրեն:

—Հա՛, մայրի՛կ, իմ սիրածն ա:

—Դե կանչա՛, գա:

—Նախշո՛ւն ջան, արի՛, —ասավ թաքավորի տղեն:

Ձուկը թռավ տղի գիրկը:

Պառավն ասավ.—Նախշո՛ւն ջան, կրդառնա՞ս ընձի աղջիկ, ես աղջիկ չունեմ, մենակ եմ, քեզի լավ կրպանեմ:

Ձուկն ասավ.—Կրդառնամ քո աղջիկը, մայրի՛կ ջան:

Տղեն տեսավ, որ ձկան նափասը կղրվում ա, քցեց ջուրը: Պառավը մոտը վեղրո ուներ, կախեց ջուրը, ձուկը էկավ, մտավ վեղրոն:

Թաքավորի տղեն վեղրոն վերցուց, գնացին պառավի տունը: Պառավը բերեց մե մեծ տաշտ, օխտը վեղրո ջուր լցեց, ձուկը քցեց էտ տաշտի մեջը:

Ձուկն սկսեց ուրախ-ուրախ լողալ:

Պառավը թաքավորի տղին տարավ մե քունջը, փարդա չինեց, կայնըցուց փարդի հետևը, ասավ.—Ինչ որ կրտենաս, ձեն չանես:

Պառավը գնաց դուս: Ձուկը տեսավ՝ տանը մարթ չըկա, ջրից դուս թռավ, դարցավ մե նխշուն աղջիկ, տունն ավլեց մաքրեց, էլի դարցավ ձուկ, մտավ տաշտը:

Պառավն էկավ, տեսավ՝ տունն ավլուկ ա:

Տղին տարավ դուս, խոսցուց:

—Ի՞նչ տեսար, թաքավորի՛ տղա:

Տղեն ասավ, որ ձուկը դարցավ աղջիկ, տունն ավլեց:

—Սիրո՞ւն էր, էտ աղջկան կառնե՞ս:

—Էտ աղջկանից բացի, էլ ուրիշ աղջիկ չեմ ուզում:

—Լա՛վ,—ասավ պառավը,—մութը որ ընկավ, կրգաս, էլի կըմտնես փարդի հետերը, ես աղջկան կըխոսցում, էլի ձեն չանես, աղջիկը քոնն ա:

Մութն ընկավ, տղեն էկավ, մտավ փարդի հետերը:

Պառավը նստավ, ասավ.—Աղջի՛կ ջան, ճրագը վառա՛, տունը մութն ա:

Ձուկը թփրտալեն ջրից դուս թռավ, ճրագը վառեց, կայնավ պառավի հռռչը:

—Աղջի՛կ ջան, ասա՛ տենամ, դու վի՞ր աղջիկն ես:

—Ես ծառի աղջիկն եմ: Թաքավորը սղոցով կդրեց դրեց ջրի մեջը, դարցա աղջիկ: Թաքավորը գնաց չոր հղրկելու: Էտ վախտը մե բոշի աղջիկ էկավ, որ ընձի խեղդա, հինքը դառնա թաքավորի հարս: Ես դարցա ձուկ: Դու բերեցիր, արիր քեզի աղջիկ:

—Թաքավորի տղին կուզե՞ս, աղջի՛կ ջան, քեզի տամ թաքավորի տղին: Էգուց հարսանիքդ անեմ:

—Մայրի՛կ, բոշի աղջկանից եմ վախենում, ընձի կըխեղդա:

—Լա՛վ, դու դարցի՛՛ ձուկ, մնացածը իմ բանն ա,—ասավ պառավը,—ես բոշի աղջկա դատը կանեմ:

Գնաց թաքավորի մոտը, ասավ.—Թաքավո՛ր, իմ աղջիկը ուզում եմ տամ քո տղին, դու էլ, տղետ էլ էկեք տեսեք, կըհավանեք՝ տարե՛ք, չեք հավանի՝ թող մնա:

—Իմ տղեն խողածինի աղջիկ չի ուզա, պառա՛վ:

—Թաքավո՛ր, տղիտ վերցրո՛ւ, արի՛:

Թաքավորը տղին կանչեց: Տղեն ուրախ-ուրախ էկավ: Թաքավորը չէր իմանում, որ տղին ամեն բան հայդնի ա: Տղի հետ գնացին:

Տուն մտան, թաքավորը քարացավ, կայնավ.—Պառա՛վ, էսի ծառի աղջիկն ա, իմ հարսն ա, էս ո՞նց ա, որ քո տանն ա:

Հետո աղջկան ասավ.—Նախշո՛ւն ջան, էթանք մեր տուն:

—Բոշի աղջկանից վախենում եմ, հայրի՛կ:

—Թե իմ տղին հավանում ես, ես բոշի աղջկա դատը կանեմ:

—Թե քո տղեն ընձի հավան ա, ես հավան եմ, հայրի՛կ:

—Էս աղջկանից բացի, ուրիշ աղջիկ չեմ ուզի, հայրի՛կ:

Նոր չորեր կարել տվին, հաքցրին Նախշունին: Բոշի աղջկան իրա չորերը հաքցրին դուս արին: Թաքավորը հարսին ու պառավին տարավ պալատ: Էտ վախտ թաքուհու սիրտը ուրախությունից պաղռավ: Թաքուհուն թաղին, թաքավորը պառավի հետ պսակավ, տղեն՝ Նախշունի հետ: Օխտը օր թաքավորին, օխտը օր էլ տղին հարսանիք արին, հասան իրանց մուրազին: